«Դավիթ Անհաղթ»
Բժշկական կենտրոն
ՓԲԸ

Медицинский Центр
„Давид Анахт"
ЗАО

Ք. Երևան, Հ. Ներսիսյան 7. Հեռ.՝ 28 – 63-20

N 16

«20» հունվարի 2014թ.

*ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով բժշկական սարքավորումների և պարագաների գնման շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին*

«ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով կազմակերպված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում <<Դավիթ Անհաղթ>> ԲԿ ՓԲԸ-ի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կետրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր ընկերության միջև կնքված N «ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով բժշկական պարագաների գնման համաձայնագրով ապրանքներ:

Մատակարարման պայմաններն են՝ Վաճառողը տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի Ապրանքը հասցնում է Գնորդին ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, գնման ժամանակացույցով նախատեսված քանակությամբ և մատակարարման ժամկետում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, տնօրենի ընդունարան՝ մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը:

Հայտը ներառում է «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №5), գնային առաջարկը, որը ներկայացվում է ապրանքի *միավորի գնով* (Հավելված №6): Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԴԱ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Հայտ պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում, սոսնձված, ստորագրված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են 1 բնօրինակից և 2 պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտի հետ միասին ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն <<Դավիթ Անհաղթ>> ԲԿ ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Հ. Ներսիսյան 7 հասցեով, 2014 թվականի փետրվարի 1-ին, ժամը 14:00-ին:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի՛ գնային առաջարկ: Գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ, գները նվազեցնելու նպատակով, կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Հաղթողի ընտրությունը կկատարվի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Խնդրում եմ ծանուցումը ստանալիս էլեկտրոնային տարբերակով պարտադիր հաստատել ստացման մասին:

Առդիր՝ 21 էջ:

*Հարգանքով՝*

*Ա. Միսոյան*

Կատարող՝ Տաթևիկ Սարգսյան
Հեռ.՝ /055/ 04-04-87